



Կ Ր Ո Ն Ա Կ Ա Ն

Ա Ս Տ Վ Ա Մ Մ Ե Ջ Ի Հ Ե Տ*



Րիստոսի ծնունդով Աստված մարդկության հետ եղավ նաև ֆիզիկապես: Մարդարեններեն և րազված էմմանուելի (ընդ մեզ Աստուած) տեսիլքը իր թանձրացյալ իրականացումը գտավ Բեթղեհեմի մսուրին մեջ:

Ստեղծագործության «սկիզբ»-ներուն մարդ երեցավ երկրի վրա «ի պատկեր Աստուծոյ»: Իսկ ժամանակներու «լրում»-ին Աստված հայտնվեցավ պատմության թատերաբեմին վրա մարդկային մարմինով: Տիեզերքի մեծագույն դեպքն է այս իր խորհրդով:

Ս. ՄՆՈՒՆԴԸ ԿԵԴՐՈՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ.— Քրիստոսի ծնունդին առաջ և հետո նշանավոր շատ դեպքեր տեղի ունեցան մեր հողագործին վրա: «Աշտարակներ» շինվեցան և բուրգեր բարձրացան: Մեծ կրոնսդիրներ երեցան. ևզական դյուտեր եղան և գիտական նոր լույսեր բացվեցան. պատմական և մեծ տարողության մե արշավանքներ պատահեցան և ընկերային նոր շարժումներ խմորվեցան: Աստեք հեղաշրջեցին մարդկային կյանքը և պատմության նոր անկյունաքարներ տվին. նոր ճամբաներ բացին մարդու մտածելու և գործելու աշխարհներուն մեջ և ծնունդ ու վերելք տվին քաղաքակրթության: Սակայն անոնցմե և ոչ մեկը ծառայեց իբրև ժամանականիշ պատմության: Այդ մենաշնորհը վերապահվեցավ Աստուծո մարդկության հետ ըլլալու պատմական մեծ դեպքին:

Բեթղեհեմի Մնունդով պատմությունը կապվեցավ անշարժ խարիսխի մը: Անկե հետո դեպքեր հիշվեցան Քրիստոսն առաջ և Քրիստոսն վերջ. իսկ Քրիստոս եղավ կեդրոնը պատմության...

ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ՄԵՋ.— Մարդկային մեծ շրջանակին եթե իջնենք այն «փոքր ածուն», զոր կկազմե հայությունը, պիտի տեսնենք, որ պատկերը տարբեր չէ նաև այստեղ:

Պատմական իրողություն է, որ Աստված մասնավոր կերպով հայ ժողովրդին մեջ հայտնվեցավ այն օրին, երբ Լուսավորչի տեսիլքով «էջ Միածինն ի Հօրէ, և լոյս փառաց» ընդ նմա: Եվ մեզի հետ մնաց դարեր շարունակ, երբ մենք անցանք կրակի և սուրի մորիկներու ընդմեջն: Ու պետք է հաստատել, որ մենք ալ եղանք Աստուծո հետ. վկա՝ մեր հավաքական քրիստոնյա կյանքը, մեր մարտիրոսներու բազմությունը և մեր համակ կրոնական մշակույթը: Աստված Ինքզինք տված էր մեզի. մեր կարգին ջանացինք տալ Իրեն ինչ որ մեր լավագույնն էր և ինչ որ մեզի համար թանկարժեք էր— կյանք, միտք և նյութ: Մեր վերապրումը մարդկային փոթորիկներու մեջն գրեթե կպարտինք Աստուծո հետ ըլլալու այս պատմական իրողության: (Թե Աստված «տանջէ զամենայն որդի զոր ընդունի» կրոնական ճշմարտություն մը և իրողություն մըն է, որ կրնա կարևոր լույս ձգել մեր պատմության այլապես անըմբռնելի կարգ մը երևույթներու վրա, սրտնց չենք անդադառնար այժմ):...

ՄԵՆՔ ԱՆ ԱՍՏՈՒԾՈՆ ՀԵՏ.— Աստված պատմական որոշ պահի մը մեջ չէ միայն, որ մեզի հետ եղած է, Մեզի հետ է միշտ և խոս.

* Արտատպում ենք Երուսաղեմի Հայ Պատրիարքության պաշտոնական հրատարակություն «Միոն» ամսագրի 1956 թվականի դեկտեմբերի խմբագրականը որոշ կրճատումներով:— ԽՄԲ:



տացած է մեզի հետ ըլլալ «զամենայն ատուրս մինչև ի կատարած աշխարհի»։ Արդարև Քրիստոս մեզի հետ է իր ետին ձգած անըս-պառ հոգեկան և բարոյական ժառանգու-թյամբ։ Ան մեզի հետ է իր «լեռան քա-րոզ»-ին մեջ, առականերուն մեջ, իր կտակի և հրաժեշտի խոսքերուն մեջ։

Քրիստոս մեզի հետ է, տեսանելի կերպով, իր զոհաբերության մեծ խորհրդին մեջ։ Մեր սուրբ սեղաններուն վրա մշտնջենավոր-ված սուրբ պատարագները զգալի կերպով մեզ հետ կպահեն զԱյն իր սիրո և զոհողու-թյան գերագույն արարքին մեջ։

Քրիստոս մեզի հետ է իբրև «Աշխարհի լույսը»։ Մենք լույսով միայն կտեսնենք բնության պարզած գեղեցկություններն ու տղմաթաթախ ճահճացումները։ Լույսով կճաննանք, թե մեր դեմ ելլող կենդանին զառնու՞մ է, թե գազան։ Քրիստոսի բերած լույսով միայն կրնանք մենք զանազանել իս-կական բարին՝ չարեն, ճշմարտությունը՝ սու-տեն և հոգեկան գեղեցկությունները՝ բարո-յական տգեղությունները։

Քրիստոս մեզի հետ է, վերջապես, իբրև «ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք»։ այսինքն իբրև ուղղություն՝ շիտակ կյանքի, պարկեշտ մտքի և խաղաղ խղճմտանքի։

Հայ ժողովուրդը ինչ որ ունի իբրև պար-ծանքի առարկա և հավերժական արժեք— Եկեղեցի, մաքուր նկարագիր, մեծաքանչ ծես, կրոնական մշակույթ և այլն, կպարտի մեծագույն չափով իր Աստուծո հետ ըլլալու

իրողություն։ Հոգիով և զգացումներով շա-ղարտված հայ զանգվածը կցանկա պահել այդ պատմական և աստվածային մենաշնոր-հը. անոր մեջ կգտնե իր մխիթարությունը, երջանկությունը և իր ֆիզիկական ու հոգե-կան ապահովությունը։ Մեր ժողովրդի հա-մար հարցում մը ըլլալն ավելի համոզում մըն է առաքելական այս խոսքը. «Եթէ Աս-տուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեզ հակա-ռակ»։

«Աստված մեզի հետ. մենք ալ Աստուծո հետ»։ Ա՛յս պետք է ըլլա մեր ազգային նշա-նաբանը հառաջիկա տարի և գալիք բոլոր տարիներում, ինչպես եղած էր այդ դարե-րով մեր պատվական նախնիքներուն։ Ասի-կա արդեն նշանաբանն է Եկեղեցվո Սրբա-զան Պետին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա Կաթողիկոսի։ Այս նշանաբանն կառնե Ան իր անսահման լա-վատեսությունը և դրական, շինարար, կա-ռուցողական աշխատանք կատարելու իր համբուրելի Նոանդը։ Իր ազնվական օրինա-կը վարակիչ ըլլա ամենքիս համար։ Թույլ պետք չէ տանք, որ հատվածական այլամեր-ժություն ոգին վերածվի ազգային ախտի մը. այդ կրնա դուռ բանալ անդարմանելի ազ-գային աղետներու...։

Մենդյան տոնին մշտահոս պատգամն է. շարունակենք Աստուծո հետ ըլլալ, որովհե-տե Աստված շարունակ մեզի հետ եղած է, և զգալի նշաններ կան, որ մեզի հետ է հաւ-կապես ներկա ժամանակներու մեջ։

